Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Կանաչուտի Գ. Եփրեմյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Անգլերեն>> (10 դասաժամ), <<ՀԵՊ>> (5 դասաժամ), <<Մաթեմատիկա>> (20 դասաժամ), <<Տեխնոլոգիա>> (4 դասաժամ) առարկաներից ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին հաապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝3x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ **դեկտեմբերի 7-ից** մինչև **դեկտեմբերի 20-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 22-ին՝ ժամը 14^{00}-ին,** Արարատի մարզի Կանաչուտի Գ. Եփեմյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝Արարատի մարզ, գյուղ Կանաչուտ Այվազովսկու 1/1:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 43-32-73: